

< Տէր Մովսէս Կաթողիկոս Ամենայն
Հաճոց եւ Պատրիարք Վաղարճապետ
Սուրբ Աթոռի < Ին թվ. ՌՀԸ >

Յիսուսի Քրիստոսի Մանուկ Մովսէս
Վարդապետ Վիճակ ՍՏԱԹէ ||| :

Յիսուսի Քրիստոսի ծառայ Մովսէս Կա-
թողիկոս ծառայ սրբոյ աթոռոյ էջմիածնի,
յորմէ ժամանեալ հասցէ գիր օրհնութեան եւ
նամակ պահպանութեան, շնորհք առաքելա-
կան եւ աստուածային օրհնութիւնն ի վերայ
աստուածախնամ սուրբ Նախավկայի վանից
օրհնեալ սեպհական թէմի եւ վիճակի, մա-
նաւանդ Զուղայու եւ Աստապատու քահա-
նայից, տօրվաթաւորաց եւ առ հասարակ ժո-
ղովրդոց, մեծամեծաց եւ փոքունց, արանց
եւ կանանց, ծերոց եւ տղայոց, երիտասար-
դաց եւ կուսից եւ ամենայն չափու հասակի
հաւատացելոց ի Տէր: Ծնորհք ընդ ձեզ եւ
խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ եւ ի
Տեառնէ ամենակալէ Յիսուսէ Քրիստոսէ եւ
ի սուրբ Հոգւոյն կենարարէ եւ առատածաւալ
պարգեւարաշխէ եւ շնորհապարգեւէ եւ ա-
մենագօրէ եւ մարդասիրէ. ամէն:

Օրհնութիւն Հօր, պահպանութիւն Որդ-
ւոյ, նախախնամութիւն ամենասուրբ Հոգւոյն
միշտ եւ հանապազ եղիցի ի վերայ ձեր. եւ
օր ըստ օրէ լցուցէ զձեզ փառօք, պատուօք
եւ արգասալիւր ճոխութեամբ իբրեւ զօրթս եւ
զոստս սաղարթախիտ եւ պողալից դրախտ
անկեալ ի գնացս Հոգւոյն վտակաց, կալ մնալ